

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.



ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԻՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1899 ԹԻՒՆՎԱՐԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԵՐ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Սւրբուպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԿՈՒՄԱՆԸ (Բաղարայան և Բարսեղյան փողոցների անկիւն):
Կարողութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Ցայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Գ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պատմականների ապահովութեան ծրագիր.—
ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի կարիք. Մամուլ. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ասիական թիւրքիա. Նամակ Պարսկաստանից. Արաբիկ լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայերէն հին գրականութեան խնդիրներ:

ՊԱՇՏՈՆԵԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

«Մշակի» մէջ մենք յայտնեցինք, որ Վեհափառ Կաթողիկոսը յատուկ կոնգրակով հաստատել է Ներսիսեան դպրոցի ծառայողներին թոշակարկը, որ մշակել էր դպրոցի հոգաբարձութիւնը առանձին յանձնաժողովի միջոցով: Թոշակարկի հաստատութիւնը նորութիւն է հայոց դպրոցական կեանքի մէջ: Եւ ուրախալի է, որ դպրոցի վարչութիւնը կարողացաւ իր առաւ օժանդակութեամբ իրագործել դպրոցական գործողների ապահովութեան այդ կարևոր խնդիրը: «Մշակը» գեռ մի քանի տարի սրա-

նից առաջ մասնացոյց էր եղել այդ խնդրի կարևորութեան վրա և ցանկութիւն էր յայտնել, որ թոշակարկը հիմնուելու դաւադիրը իրագործվի բոլոր դպրոցների համար: Անկասկած այդ հարցը, որի վերաբերմամբ մենք տեսնում ենք այժմ համակրութիւն թէ դպրոցական շրջանում և թէ էջմիածնում, կարող էր լինէր գրական լուծում ստանալ, եթէ էջմիածինը իր ձեռքում մի կողմից յատկապէս այդ նպատակի համար մի կողմից գումար: Սակայն այդ գումարը չը կայ, մեր միւս թեմական դպրոցները և Կէրդեան ձեմարանը ներկայումս ազատ գումարներ չունեն իրանց ձեռքին: Իսկ մէկ միւսին սպասելով թոշակարկի հարցը կը յետաձգվէր անորոշ ժամանակով և զուգէ երբէք չէր իրագործվի: Ուստի բոլորովին խելացի և նպատակայարմար է, որ թոշակարկի ծրագիրը իրագործվում է զոնէ այն դպրոցում, որ ունի նւթական փողեր ի շատէ յարմարութիւն այդ գործի համար:

Հաստատած կանոնադրութեան մէջ, սակայն, նախատեսված է և այն կէտը, որ

նութեամբ ի Զորոյփորեցոյն: Տ. Խալաթեանց բնաւ չի խորհիր թէ Նազիմադացոյ և Սուտ-Կալլիսթինեսի հայերէն թարգմանութեանց մէջ ծաղկաբաղ չըլող Խորենացին՝ կրնար յարգի համարել զանհամ և զանհարթ թարգմանութիւնն Մեծ Սեղբետորոսի: Հայկաբանութեան հայեցմամբ՝ հաւատարմ են ուրեմն Նազիմադացի և Սուտ-Կալլիսթինեսի՝ անկողի և անտաշ Մեծ Սեղբետորոսին. կամ թէ ըսեմ՝ հայերէն գրականութեան մի և նոյն շրջանի գործեր են թէ Նազիմադացոյ և Սուտ-Կալլիսթինեսի թարգմանութիւնը և թէ Մեծ Սեղբետորոսին: Տ. Խալաթեանց բնաւ չի խորհիր որ դիւրագրացոյց լեզուն զկողմորդաւաւ, աղիւսաղուր՝, խժական, խեցեակաղոյն՝ անուանող Խորենացին (Գ. ծղ.

1) Փոխանակ աղիւսաղուր՝ Վլաստիսկան տպագրէն յերես 300 ունի աղիւսաղուր. իսկ մի Զեւա-գիւր Ս. Դաշարու՝ աղիւսաղուր (տես մեծագիւր Խորենացի, երես 248), ծանօթութիւն 2) Հանդէս Աստուր, 1896, երես 140 ը, ծանօթութիւն 1, գրեթէ. Ուղղէ՝ աղիւսաղուր. փախազել էր գիտել թէ էնչ հիման վրայ հաստատել է ուղղութիւնը և թէ էնչ էր նշանակէ աղիւսաղուր. ՅԱՆԿԵՐԱՆԻ ՄԵԼԻՆԵՐԵԱՆ Բ. Տեղութեայ, Դ. 208, գրեալ է. Զհեքայեցի զիւսաղուր ուր լեզուն միայն գիտէր (Պաւլոս): Կայ և ի վկայաբանութեան Սերոյն թէ ուղղութիւնը Սերոյն (Վաքը և Վ. Կալաբանու-թիւնը Սերոյն, է. Ա. 554). Հիմա ը բաղաբի մի փոքրէն... որ ըստ Հայկական անալոյթաւ սիղբայեցի կոչէ Երեմիայի, և ըստ խմայելեան խմայեղուր լեզունը Երեմիայի:

երբ Կէրդեան ձեմարանը և միւս թեմական դպրոցները ցանկանան իրանք ևս մասնակցել թոշակարկին, կարող են սկսվել բանակցութիւններ այդ նպատակով որոշելու թէ ինչ միջոցներով հիմնել կարելի է թոշակարկը: Անկասկած, գործի աջողութեանը կարող է նպաստել մի կողմից նուիրատուութիւն, եթէ նա կատարվի այդ նպատակով և այդպիսով կազմվի թոշակարկի կապիտալը հիմնական կողմից:

Մի առանձին յօդուածով մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին հաստատված ծրագրի էական կէտերի հետ:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԿԱՐԻՔ

Մի քանի ամսից յետոյ կը սկսվի կանոնաւոր երկաթուղային երթևեկութիւն Թիֆլիս-Կարսի և Բազու-Պետրովսկի գծերի վրա: Այդ նոր գծերով մեր երկրի մի քանի տեղերը, որ կողմնակից են հաղորդակցութեան յարմար միջոցներից՝ կը միանան Անդրկովկասեան դժի հետ, իսկ միւս կողմից մեր ամբողջ երկիրը կը միանայ Ռուսաստանի ընդհանուր երկաթուղային ցանցի հետ: Անկասկած, հաղորդակցութեան այդ զարգանալը և բարդանալը կաւելացնի և այն գործը, որ պէտք է կատարի ներկայումս դրոյթիւն ունեցող Անդրկովկասեան գիծը: Պէտք է նկատել, որ այդ գիծը, նոյն իսկ այժմ, անկարող է բաւականութեամբ տալ Անդրկովկասի աղգաբնակչութեան պահանջին, իսկ նոր երկաթուղային գծերի պատճառով աւելացած գործը նրա համար կը լինի մի նոր բեռ:

Անդրկովկասեան գիծը այնքան մեծ տեղ է տալիս նաւթի և նավթային արդիւնքների տեղափոխութեան, որ երկաթուղին դառնում է յատուկ նաւթային և անտես է առնում տեղական արդիւնադրութեան, տեղական գիւղատնտեսութեան պահանջները: Իհու եօթ տարի սրանից առաջ, երբ յատուկ յանձնարարութեամբ Կովկաս էր եկել առևտրի զեպարտամէտի այժմեան դիրեկտոր Վ. Ի. Կովալեւսկի՝ ուսումնասիրելու Անդրկովկասեան երկաթուղու ապրանքների շարժման և նրա զարգացման գործը, յայտնված էր որոշ կերպով այն կարծիքը, թէ Անդրկովկասեան երկաթուղին պէտք է աւելացնի իր այն վազօնների և գնացքների թիւը, որոնք տեղափոխում են ոչ նաւթային և ոչ Անդրկասպեան երկրի, այլ տեղական արդիւնքներ: Իրականութեան մէջ երկաթուղային վար-

չութիւնը կատարեց մի քանի բարեփոխութիւններ, բայց շատ սահմանափակ չափով:

Այժմ, երբ երկաթուղային շարժումն աւելի ևս մեծ ծաւալ պէտք է ստանայ՝ ժամանակ է նորից յարուցանել մոռացված հարցը և դնել նրան միջխտորութեան առաջ: Երկաթուղիները ուրիշ տեղերում իրանք աշխատում են նոր գործեր ստեղծել, արդիւնադրական շարժում առաջ բերել, իսկ մեղանում նա չէ կարողաւում մինչև անգամ կեանքի իրական պահանջին բաւականութիւն տալ: Անհրաժեշտ է այս մասին մտածել, և թող ձեռնհաս անձինք և հիմնարկութիւններ օր առաջ խնդիր յարուցանեն մեր երկրի տնտեսական կեանքի այդ կարիքի վերաբերմամբ:

Մ Ա Ս Ո Ւ Լ

Ինչպէս են գրական հակները փառք ստեղծել: Այդ վերին աստիճանի հետաքրքրական հարցը փորձում է լուծել ֆրանսիական «Revue des Ruvues» կիսամեայ հանդէսը: Եւ լուծում է, պէտք է ասել, աշխարհահռչակ տաղանդների համար ոչ պատաւեր կերպով: Հանդէսը ուղղում է ապացուցանել, որ բոլոր նշանաւոր վիպագործները, օրինակ, Շատոբրիան, Ժօրժ Զանդ, տիկին Ստալ, Էօժէն Սիւ, Վիկտոր Հիւգօ եղել են գողեր, որոնք ուրիշներից են վերցրել սիրէտներ, նկարագրութիւններ: Մանաւանդ շատ մեղադրվում է Վիկտոր Հիւգօ: «Թըշուառներն» հաշկաւոր հեղինակը, ինչպէս ասում է յօդուածագիրը, սկսեց քրքրել գրադարաններում եղած հին վէպերը, թէ ֆրանսիական և թէ օտար լեզուներով գրված, փոխ առնելով մէկից սիրէտը, միւսից պատկերները և նկարագրութիւնները, երբորդից փոխփոխալիս խորհրդածութիւնները, չորրորդից տեղերը և այլն: Պարզիկ Նոտր-Դամէ վէպը գրված է այս կերպով: Այդպէս է գրված և նոյն հեղինակի «Բիւի Բաղդ»։ Պողոթններ էր առնում և Սլէքսանդր-Բիւմա-Ֆայրը, իսկ Յօժէն Սիւ իր հաշկաւոր «Թափառական Հրէան» վերցրել է Մատսոնի մի գրուածքից: Ցայտի հեղինակ Միւրօն իր մի գրուածքը փոխ է առել տասն և հինգ կամ քսան հեղինակներից: Մի և նոյնը արել է և Դիւմա-որդին: Իսկ ինչ վերաբերվում է Սարգսիւն, նրա գողութիւնները ամենքին յայտնի են:

Եւ այսպէս, բոլոր նշանաւոր ֆրանսիական հեղինակները, որոնք համար ժամանակակից սերունդը փառքի պատուանդաններ է բարձրացրել, երեան են գալիս իրրե գրական գողեր: Բայց միթէ այդ փաստերը ոչնչացնում են Հիւգօներին, Դիւմաներին փառքը: «Русскія Вѣд.»

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ս Յ Ե Ր Է Ն Հ Ի Ն Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն Ի Ն Գ Ի Ր Ե Ր

Ա. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱԳԻ

(Շարունակութեան)

Առանց միտ դնելու այս ամենայն զանազանութեանց Սեղբետորոսի վարուց յոյն օրինակին և Զորոյփորեցոյ թարգմանութեանն, առանց քննելու թէ Զորոյփորեցին ամենուրեք հաւատարմ մնացած է բնագրին թէ ոչ, ուսուցչական Տ. Խալաթեանց գրեց արձակ համարձակ (Հանդէս, 1897, երես 338 ը) թէ «Տասնուհինգ տող բառացի փոխ է առել Խորենացին Սեղբետորոսի Ընդարձակ Վարքի վերոյցերն ալ հատուածից: Տ. Խալաթեանց քաջ գիտէ, որ յուր նախնի էր օրվաէն ու Արտափայեալ չի նշանակիր, այլ Զօրեղ, Ուժեղ. և սակայն բնաւ չի խորհրդածել թէ ինչպէս կարող էր Զորոյփորեցին զ'Զօրեղն չըլել յ'Արտափայեալ: Զորոյփորեցոյն կու տայ զ'Արտափայեալն, և կը հաստատէ թէ Խորենացի ևս ընդօրինակեց նոյն-

523) կրնար կարծել ի Գարգարացոց ոչ յոյժ հեռի Գուգարացոց լեզուին, և Խորենացոց պէս հօգր և կորովաբան մատենագիրն կը զիջանէր ընդօրինակել ի թարգմանութենէ Գուգարաց աշխարհին Զորոյփոր գաւառին կուպիտ թարգմանչին՝ որ փոխանակ գրելու Վերքի գիտացին սպասարկել զիշապին, թէ» կը գրէ. «Որք վիշապին եղելոց սպասարկաց ծանուցեալ, թէ» երեսը 707—708.—փոխանակ «Հրաման եման» կը գրէ. «Արտադրեաց դաւանութիւն». երես 721.—փոխանակ «Պատճառեալ հրանդութիւն (կամ՝ Խալաթեանաւ եղեալ)՝ հրամարեաց յուղեութեանն» կը գրէ. «Պատճառեալ հրանդութեան» յայտն ճանապարհէ զինքն վերջապեց. երեսը 753—754.—փոխանակ «Տէրն մեր Բրկիչն Յիսուս Գրիստոս» կը գրէ. «Բուկապէն մեր և Բրկիչն մեր Յիսուս Գրիստոս», երես 775. զ'Իսկապէսն մերս. երես 767. «Իսկապիսին մերոյ Գրիստոսին», երես 776, և այլն և այլն Տ. Խալաթեանց ու չի դնել այս ամենանիւն, այլ կըսէ (Հանդէս, 1897, երես 340 ա). «Այսպիսի ծաղկաբաղը, մանաւանդ թարգմանական գրուածքներից, Խորենացու սիրաման է, նորա բնորոշ մատենագրական եղանակն է...: Նոյն ուղղութեան չորսիւն՝ հայ պատմագիրը օգտուել է և Սեղբետորոսի Ընդարձակ Վարքից: Եւ հետեւալ

կրկին եղբակացութեամբ Տ. Խալաթեանց կաւարտէ զիւր յօդուածն (անդ, երես 359 ա). «Ա. Խորենացին ճանաչել է Սուրբատի Սեղբետարական Պատմութեան Յօթներորդ դարու հայերէն թարգմանութեան համառոտութիւնը, կամ՝ որ նոյնն է, Փոքր Սովկարեւ, և օգտուել է նորանից: Բ. Խորենացին ճանաչել է Ս. Սեղբետարոսի վարքի նոյնպէս Յօթներորդ դարու վերջում կատարուած Ընդարձակ և Համառոտ հայերէն թարգմանութիւնները, և օգտուել է նոյնանից: Արդէն հեղեցի զառաջին եղբակացութիւնը և զերկրորդ եղբակացութեանը երկրորդ մասնն, որ Տ. Կարէթի գիւտերն են՝ թէ Խորենացի օգտուած է յովկերորդ դարու ի Փոքր Սովկարեւ և ի Փոքր Սեղբետարոսին: Ցայս վայր կատարած բնութեամբը հեղեցի և զերկրորդ եղբակացութեանը առաջին մասնն, սեպական գիւտ Տ. Խալաթեանցի, թէ Խորենացի ճանաչած է զ'Սեղբետարոսի թարգմանեալ յայմին 678 ի Գրիգորէ Զորոյփորեցոյ և օգտուած է անտի:

Թէպէտ և եղանակով զվարդապետութիւն Տ. Խալաթեանցի՝ եղած կ'ըլլամ նաև զվարդապետութիւն պատուական սարկաւազին Տ. Գալուստ Տէր Սկրտչեան (Արարատ, 1897, Սեպտեմբեր—Հոկտեմբեր, երեսը 432 ը—424 ա), սակայն աւելորդ չեն հետեւեալ քանի մի խոր-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.